

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

30.11.2020թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս. Մնացականյանը

ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա. Անանյանը, Գ. Գևորգյանը, Ա. Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը

ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Նիստին անցկացվել է հեռահար:

Հրավիրված էր՝

Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ.Տիտիգյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի մարտի 20-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ Տիտիգյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումը համաձայն ներկայացված նախագծի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2019թ. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ և «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ Տիտիգյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2019թ. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ և «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները:

/Անհատական/

28.12.2020թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԻՆ նախագահ՝ Ս.Մնացականյանը
ՀՀ ՎՊԻՆ անդամներ՝ Ա.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԻՆ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Նիստին անցկացվել է հեռավար:

Հրավիրված էին՝

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն.Մուշեղյանը,
Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը,
Սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա.Գրիգորյանը,
Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Դ.Անանյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

Լսեցին՝

1. «2021 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2021 թվականի վիճակագրական ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 64-Ն, 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 05-Ն, թիվ 08-Ն, թիվ 09-Ն, 2019 թվականի մայիսի 24-ի թիվ 31-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Անանյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումները համաձայն ներկայացված նախագծերի

/Նորմատիվ/

Լսեցին՝

3. ««Հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 4-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 84-Ն, ««Գիշերօթիկ հաստատությունների գործունեության մասին» Ձև 1-գիշերօթիկ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 09-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 34-Ն, ««Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-սոցսպաս (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշումների նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումները համաձայն ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

4. «2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

**Որոշեցին՝
հաստատել 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած
ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք
կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ
ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը՝ համաձայն հավելվածի:**

/Անհատական/